ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՐՄԵՆԱԿ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Դանիելյան,

Ի պատասխան Ձեր 15.08.2024թ. հ. 236-2024թ. գրության՝ տեղեկացվում է, որ 2017 թվականի հունվարի 1-ից մեկնարկել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ծառայությունների մատուցման Վարձակալության պայմանագիր, որի կողմերն են հանդիսանում Ջրային կոմիտեն՝ որպես Վարձատու և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն՝ որպես Վարձակալ:

Ելնելով վերոգրյալից, տեղեկացվում է, որ խնդրի կարգավորումը գտնվում է Ջրային կոմիտեի, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և/կամ սեփականատերերի պատասխանատվության ներքո:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով հարցի կարևորությունը, Երևանի քաղաքապետարանի կողմից, գնման ձեռքբերման ընթացակարգով, հայտարարվել է Մոլդովական փողոցի հ.29/1 շենքից մինչև Դ. Մալյան փողոցով անցնող կոյուղագծի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և տրամադրման աշխատանքների մրցույթ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում, գնման ընթացակարգով, առաջիկա տարիներին կհայտարարվի նաև շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցույթ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Երևանի քաղաքապետարանի 2023թ. ծրագրերով իրականացվել է Մոլդովական փողոցի հ.29/1 շենքից հ.29/6 շենք կոյուղագծի վերակառուցման շինարարական աշխատանքները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ